**ՀՀ փաստաբանների պալատի տարեկան ընդհանուր ժողով**

09.02.2011 07:16

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի տարեկան

ընդհանուր ժողովի անցկացման վերաբերյալ

ՀՀ փաստաբանների պալատը հրավիրում է Ձեզ մասնակցելու Պալատի տարեկան ընդհանուր ժողովին, որն անցկացվելու է **2011թ. մարտի 12-ին ժամը 11:00-**ին ՀՀ կառավարության նիստերի դահլիճում (հասցեն՝ ***ք. Երեւան, Մելիք-Ադամյան փող.,1***)՝ հետևյալ օրակարգով՝

1) ընդհանուր ժողովի անցկացման հետ կապված անհրաժեշտ կազմակերպչական հարցեր,

2) Պալատի խորհրդի հաշվետվությունը 2009թ.հոկտեմբեր - 2011թ. փետրվար ժամանակահատվածի համար,

3) Պալատի խորհրդի անդամների ընտրություն,

4) Պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրություն,

Ժողովի մասնակիցների գրանցումը կատարվելու է **12.03.2011թ**. **ժամը 09:45-ից մինչև 10:55-ը**:

Ժողովի մասնակցության գրանցման ժամանակ ստուգվելու է փաստաբանի անձը հաստատող փաստաթղթի առկայությունը (փաստաբանի վկայական, անձնագիր, զինվորական գրքույկ կամ վարորդական վկայական):

Պալատի նախագահ՝ Ռուբեն Սահակյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })